# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ավտոջան ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ախ-25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | . | . | . | . | Թթվածնային մեկուսիչ հակագազ (ԹՄՀ), որը նախատեսված է շնչառական համակարգը և տեսողությունը պաշտպանելու համար, աշխատում է արտաշնչած օդի վերաշրջանառությամբ՝ թթվածնով հարստանալու փակ շղթայով: Աշխատանքի ժամանակը՝ առնվազն 240 րոպե (4 ժամ՝ համաձայն EN 145 ստանդարտի): Աշխատանքային ջերմաստիճան՝ –40°C-ից մինչև +60°C: Թույլատրելի հարաբերական խոնավություն՝ մինչև 95%: Թթվածնի մատակարարման համակարգ՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Թթվածնի համակցված հաստատուն հոսքի մատակարարման արագությունը՝ 1.7 ± 0.1 լ/րոպեում կախված օգտագործողի սպառումից: Դիմակի ներսի օդափոխանակությունը՝ առնվազն 80 լ/րոպե: Էլեկտրոնային ձայնային ազդանշան փակ գլանային փականներով աշխատանքի անցնելիս (ներշնչման և արտաշնչման ժամանակ): Սարքի կառուցվածքը՝ սարքի իրանը պատրաստված է հակաստատիկ և ջերմակայուն նյութից: Սարքի չափսերը՝ առավելագույնը՝ 595 × 450 × 195 մմ: Սարքի քաշը՝ առավելագույնը՝ 16 կգ: Թթվածնի բալոնի աշխատանքային ճնշումը՝ առնվազն 19 ՄՊա: Բալոնի ծավալը՝ առնվազն 2 լիտր (գազի ծավալ՝ առնվազն 500 դմ$^3$): Թթվածնի բալոնի նյութը՝ ալյումինե (համապատասխան ISO 7866 ստանդարտին) կամ մետաղակոմպոզիտային (մետաղապլաստ՝ համապատասխան EN 12245), բալոնի փականը պետք է համապատասխանի EN 144 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ստանդարտին։ Կափույրի ապահովիչի գործարկման միջակայքը՝ 1.2–2 ՄՊա։ Կափույրի նվազագույն ճնշման միջակայքը՝ 80–400 Պա։ Մատակարարման հավաքածուի պարունակությունը՝ TMS (ստանդարտ մոդուլային հավաքածու) հավաքածուն պետք է ներառի՝ ամրագոտիներ, պանորամային դիմակ (180° դիտման անկյուն) EN 136 ստանդարտին համապատասխան՝ EPDM (Էթիլպռոպիլենային կաուչուկ), թթվածնի բալոն ≥2 լ, ≥200 մթն, քիմիական ածխաթթու գազի կլանիչ, ներշնչման և արտաշնչման խողովակներ, թոքային ավտոմատ, կափույրներ (ապահովիչային, ներշնչման/արտաշնչման), ճնշման կարգավորման համակարգ, եթե աշխատում է սառույցով ապա ներառի սառույցի տարաներ, շնչառական պարկ՝ ոչ պակաս 5 լ տարողունակությամբ, ներկառուցված կլանող փամփուշտ՝ քիմիական $CO_2$ կլանիչով (պետք է ներառված լինի առնվազն մեկանգամյա օգտագործման քիմ. |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կլանիչ նյութով), ճնշման նվազեցման փական, ճնշման չափիչ և էլեկտրոնային ձայնային մոնիթորինգի համակարգ (EN 837) իր լիցքավորիչով: Իրանը և կառուցվածքային բաղադրիչները պետք է պատրաստված լինեն հարվածադիմացկուն, վիբրացիաներին, կոռոզիային և ջերմային ազդեցությանը դիմացկուն նյութերից։ Ապակե գոլորշիացնող սարք, զսպանակներ, ամրակներ և անվտանգության գոտիներ, ներծծման փամփուշտ, տեխնիկական տվյալների թերթիկ և շահագործման փաստաթղթեր, գործարանային պիտակավորված փաթեթավորում։ Սարքի շահագործման ժամկետը ոչ պակաս 10 տարի։ Երաշխիքային պարտավորություններ` արտադրանքի երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն երկու տարի` շահագործման հանձնման օրվանից մինչև երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտը։ Երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կազմակերպությունը պարտավորվում է շտկել բոլոր խափանված մասերի և սարքերի անսարքությունները: Երաշխիքային սպասարկումը ներառում է սարքավորումների (ԹՄՀ) ապարատի բոլոր մասերի և սարքերի ֆունկցիոնալության ստուգում, անսարք սարքերի/մասերի փոխարինում և սպասարկման փաստաթղթերի տրամադրում: Մատակարարվող սարքավորումները պետք է համապատասխանեն վերը նշված ստանդարտներին: Մատակարարման պահանջները՝ սարքը պետք է մատակարարվի իր սկզբնական, կնքված և պիտակավորված փաթեթավորմամբ: Պետք է կցվի արտադրողի կողմից տրված համապատասխանության վկայական: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր ուժերով: Կցված նկարը կրում է տեղեկատվական |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ավտոշան ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱՄ-25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | բնույթ։ Մատակարարը պետք է ներկայացնի հավաստագիր կամ իրավազորման նամակ արտադրողից։ |